ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի քաղաքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 13

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Կայացավ 10 հունիսի 2022թ. ժամը 15:00 **ք. Սպիտակ**

Նիստին ներկա էին համայնքի ավագանու 26 անդամներից 20-ը՝ Քաջայր Նիկողոսյանը, Համլետ Մազմանյանը, Լուսինե Ավետիսյանը, Արտակ Մաթոսյանը, Հայկ Սիսակյանը, Ալվարդ Համբարյանը, Գագիկ Յայլոյանը, Ռաֆայել Սիմոնյանը, Վարազդատ Մխիթարյանը, Սամվել Սիմոնյանը, Կարեն Սարգսյանը, Նունե Էհտիբարյանը, Կարինե Դիլաքյանը, Վարդուհի Թումանյանը, Սարիբեկ Ամիրյանը, Վահե Ղազարյանը, Նարինե Հակոբյանը, Մանուշ Աթյանը, Գուրգեն Փիլոյանը, Սասուն Ասատրյանը:

Նիստից բացակայում էին համայնքի ավագանու 6 անդամներ՝ Մարտին Հաջյանը, Արամայիս Փիլոյանը, Զալիկո Համբարյանը, Գագիկ Սահակյանը, Թամարա Լամբարյանը, Արկադի Ասատրյանը, /պատճառները նշված են համայնքի ավագանու անդամների գրանցման թերթիկում/:

Նիստին մասնակցում էին համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ազգանուշ Ֆրանգյանը, աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման եվ հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար Անուշ Շիրոյանը, աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար Գայանե Չոբանյանը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Քաջայր Նիկողոսյանը:

Նիստն արձանագրում էր Ազգանուշ Ֆրանգյանը:

Նիստն անցկացվում էր առցանց հեռարձակմամբ:

Համայնքի ղեկավար Քաջայր Նիկողոսյանը ներկայացրեց Սպիտակ համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 10-ի արտահերթ նիստի օրակարգի նախագիծը:

Օրակարգի հարցերի վերաբերյալ առարկություններ, առաջարկություններ չեղան:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 10-ի արտահերթ նիստի օրակարգը.

1) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 2-ի թիվ 4-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

(Զեկուցող՝ Ա. Շիրոյան)

2) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 28-ի թիվ 37-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

(Զեկուցող՝ Ա. Մաթոսյան)

3) Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերից անհատույց օգտագործման տրամադրելուն համաձայնություն տալու մասին

(Զեկուցող՝ Գ. Զոբանյան)

4) «ԱՍՏՂԻԿ» բարեգործական հիմնադրամին ուղղակի վաճառքով հողամաս օտարելուն համաձայնություն տալու և ուղղակի վաճառքի գին սահմանելու մասին

(Զեկուցող՝ Գ. Զոբանյան)

5) Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող 06-046-0220-0012 կադաստրային ծածկագրով հողամասն աճուրդով օտարելուն համաձայնություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին

(Զեկուցող՝ Գ. Զոբանյան)

6) Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող 06-046-0220-0011 կադաստրային ծածկագրով հողամասն աճուրդով օտարելուն համաձայնություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին

(Զեկուցող՝ Գ. Զոբանյան)

Օրակարգը դրվեց քվեարկության:

Քվեարկության արդյունքները - ԿՈՂՄ (19) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (0)

1. ԼՍԵՑԻՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 2-Ի ԹԻՎ 4-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՐՑԸ

(Զեկուցող՝ Ա. Շիրոյան)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և 90-րդ հոդվածով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ կետերով, 32-րդ հոդվածի 5-րդ մասով, 33-րդ հոդվածի 4-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է***.

1. Սպիտակ համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 2-ի «Սպիտակ համայնքի 2022 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 4-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ՝ համաձայն թիվ 1-5 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հարցը դրվեց քվեարկության:

Քվեարկության արդյունքները - ԿՈՂՄ (19) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (0)

2.ԼՍԵՑԻՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 28-Ի ԹԻՎ 37-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՐՑԸ

(Զեկուցող՝ Ա. Մաթոսյան)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է***.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 28-ի «Սուբվենցիոն ծրագրերին մասնակցելուն համաձայնություն տալու մասին» թիվ 37-Ա որոշման 1-ին կետի 2-րդ, 3-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ ենթակետերը շարադրել նոր խմբագրությամբ.

«2. «Սպիտակ համայնքի Սպիտակ բնակավայրի Այգեստան թաղամասի փողոցի հիմնանորոգում ասֆալտապատումով և ջրահեռացման համակարգով, Շենավան բնակավայրի փողոցների մասնակի ասֆալտապատում, Արևաշողի բնակավայրի կենտրոնական ճանապարհի հիմնանորոգում ասֆալտապատումով, Ծաղկաբեր բնակավայրի 1-ին փողոցի հենապատի կառուցում, Լուսաղբյուր բնակավայրի ճանապարհների ասֆալտապատում»,

3. «Սպիտակ համայնքի Սարահարթ բնակավայրի 4-րդ փողոցի, Լուսաղբյուր բնակավայրի գերեզմանատուն տանող փողոցի, Լեռնավան բնակավայրի ՝ 2-րդ փողոցի, Ջրաշեն բնակավայրի 7-րդ փողոցի, 1-ին փողոցի, Խնկոյան բնակավայրի գերեզմանատուն տանող ճանապարհի սալարկում տուֆով և ջրահեռացման համակարգի կառուցում»,

5. «Սպիտակ համայնքի Սպիտակ, Արջահովիտ, Ջրաշեն, Արևաշող, Շենավան, Գեղասար և Խնկոյան բնակավայրերի փողոցային լուսավորության գոյություն ունեցող համակարգերի ընդլայնում»,

6. «Սպիտակ համայնքի Քարաձոր բնակավայրի խմելու ջրի ցանցի խողովակների մասնակի վերանորոգում, Գոգարան բնակավայրի խմելու ջրի ներքին ցանցի վերակառուցում, Շիրակամուտ բնակավայրի թիվ 14,16 փողոցների, Կրասնոդարի փողոցի խմելու ջրի ջրագծերի հիմնանորոգում, Հարթագյուղ բնակավայրի խմելու ջրի ջրագծերի փոխարինում և ակունքների վերանորոգում»,

7.«Սպիտակ համայնքի Սարամեջ բնակավայրի ոռոգման ցանցի վերակառուցում, Արջահովիտ բնակավայրի ոռոգման ներքին ջրատարի կառուցում, Շենավան բնակավայրի ոռոգման համակարգի կառուցում, Գեղասար բնակավայրի ոռոգման համակարգի կառուցում, Սարահարթ բնակավայրի 10-րդ, 15-րդ և 16-րդ փողոցների ոռոգման համակարգի կառուցում, Կաթնաջուր բնակավայրի ոռոգման համակարգի կառուցում, Ծաղկաբեր բնակավայրի ոռոգման համակարգի կառուցում»:

Հարցը դրվեց քվեարկության:
Քվեարկության արդյունքները - ԿՈՂՄ (19) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (0)

3.ԼՍԵՑԻՆ«ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՐՑԸ

(Զեկուցող՝ Գ. Չոբանյան)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով «ՄԱՅՖՈՐԵՍԹ.ԷՅԷՄ» բնապահպանական հասարակական կազմակերպության փոխտնօրեն Լիլիթ Մարտիրոսյանի 2022 թվականի մայիսի 5-ի թիվ ՄՖ/Ե-060522-01 գրությունը՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է***.

1. Համաձայնություն տալ Սպիտակ համայնքի Ջրաշեն բնակավայրում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 06-095-0273-0058 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության 147,84429 հեկտար մակերեսով արոտավայր հողատեսքի հողամասը անհատույց օգտագործման իրավունքով, 25 տարի ժամկետով, անտառ տնկելու նպատակով, «ՄԱՅՖՈՐԵՍԹ. ԷՅԷՄ» բնապահպանական հասարակական կազմակերպությանը տրամադրելուն:

2.Առաջարկել Սպիտակ համայնքի ղեկավարին «ՄԱՅՖՈՐԵՍԹ.ԷՅԷՄ» բնապահպանական հասարակական կազմակերպության հետ կնքել գույքի անհատույց օգտագործման պայմանագիր սույն որոշման 1-ին կետով սահմանված պայմաններով, ինչպես նաև լրացուցիչ պայմանով, որ Սպիտակ համայնքը իրավունք ունի պահանջել

վաղաժամկետ լուծելու գույքի անհատույց օգտագործման պայմանագիրը՝ հողամասը պայմանագրին անհամապատասխան օգտագործելու դեպքում:

Հարցը դրվեց քվեարկության:
Քվեարկության արդյունքները - ԿՈՂՄ (14) ԴԵՄ (5) ՁԵՌՆՊԱՀ (0)

4.ԼՍԵՑԻՆ««ԱՍՏՂԻԿ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՐՑԸ

(Զեկուցող՝ Գ. Չոբանյան)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ կետով, 48-րդ հոդվածի 3-րդ մասով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սպիտակ համայնքի Հարթագյուղ բնակավայրում գտնվող 06-061-0027-0007 կադաստրային ծածկագրով 0,60755 հեկտար մակերեսով (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական 03102018-06-0085), 06-061-0028-0007 կադաստրային ծածկագրով 0,60661 հեկտար մակերեսով (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական 25092018-06-0078), 06-061-0029-0007 կադաստրային ծածկագրով 0,60901 հեկտար մակերեսով (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական 25092018-06-0097) բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության հողամասերը 2018 թվականից վարձակալության իրավունքով պատկանում են «Աստղիկ» բարեգործական հիմնադրամին, հիմք ընդունելով «Աստղիկ» բարեգործական հիմնադրամի տնօրեն Մարիամ Անտոնյանի 2022 թվականի մայիսի 13-ի թիվ 01/003-Ե գրությունը՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է***.

1. Համաձայնություն տալ «Աստղիկ» բարեգործական հիմնադրամին վարձակալության իրավունքով պատկանող, Սպիտակ համայնքի Հարթագյուղ բնակավայրում գտնվող 06-061-0027-0007 կադաստրային ծածկագրով 0,60755 հեկտար մակերեսով, 06-061-0028-0007 կադաստրային ծածկագրով 0,60661 հեկտար մակերեսով և 06-061-0029-0007 կադաստրային ծածկագրով 0,60901 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության հողամասերը, գնման նախապատվության իրավունքով, «Աստղիկ» բարեգործական հիմնադրամին ուղղակի վաճառքով օտարելուն:

2. Հարթագյուղ բնակավայրում գտնվող 06-061-0027-0007 կադաստրային ծածկագրով 0,60755 հեկտար մակերեսով հողամասի ուղղակի վաճառքի գինը

սահմանել հողամասի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնի չափով՝ 1 քառակուսի մետրը 141,9 ՀՀ դրամ (ընդամենը՝ 862 113,45 ՀՀ դրամ):

3. Հարթագյուղ բնակավայրում գտնվող 06-061-0028-0007 կադաստրային ծածկագրով 0,60661 հեկտար մակերեսով հողամասի ուղղակի վաճառքի գինը սահմանել հողամասի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնի չափով՝ 1 քառակուսի մետրը 141,9 ՀՀ դրամ (ընդամենը՝ 860 779,59 ՀՀ դրամ):

4. Հարթագյուղ բնակավայրում գտնվող 06-061-0029-0007 կադաստրային ծածկագրով 0,60901 հեկտար մակերեսով հողամասի ուղղակի վաճառքի գինը սահմանել հողամասի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնի չափով՝ 1 քառակուսի մետրը 141,9 ՀՀ դրամ (ընդամենը՝ 864 185,19 ՀՀ դրամ):

Օրակարգի 4-րդ հարցի հետ

Հարցը դրվեց քվեարկության:
Քվեարկության արդյունքները - ԿՈՂՄ (17) ԴԵՄ (3) ՁԵՌՆՊԱՀ (0)

5.ԼՍԵՑԻՆ«ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 06-046-0220-0012 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՐՑԸ

(Զեկուցող՝ Գ. Չոբանյան)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով, 67-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 24052022-06-0041 վկայականը՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1" Համաձայնություն տալ Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող «Սպիտակ համայնք, գ" Լուսաղբյուր 9-րդ փողոց, թիվ 31 հողամաս» հասցեում գտնվող 06-046-0220-0012 կադաստրային ծածկագրով 0,5 հեկտար մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասը, գյուղատնտեսական արտադրական շինություն կառուցելու նպատակով, աճուրդով օտարելուն:

2" Հողամասի աճուրդով օտարման մեկնարկային գին սահմանել 3 267 000,00 ՀՀ դրամ (1 քառակուսի մետրը 653,4 ՀՀ դրամ):

3" Աճուրդում հաղթող ճանաչված մասնակցից համայնքի բյուջե գանձել հողամասի չափագրման և պետական գրանցման ծախսերը:

Հարցը դրվեց քվեարկության:
Քվեարկության արդյունքները - ԿՈՂՄ (10) ԴԵՄ (2) ՁԵՌՆՊԱՀ (8)

6.ԼՍԵՑԻՆ «ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 06-046-0220-0011 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՐՑԸ

(Զեկուցող՝ Գ. Չոբանյան)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով, 67-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 24052022-06-0041 վկայականը՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1" Համաձայնություն տալ Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող «Սպիտակ համայնք, գ" Լուսաղբյուր 9-րդ փողոց, թիվ 31 հողամաս» հասցեում գտնվող 06-046-0220-0012 կադաստրային ծածկագրով 0,5 հեկտար մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասը, գյուղատնտեսական արտադրական շինություն կառուցելու նպատակով, աճուրդով օտարելուն:

2" Հողամասի աճուրդով օտարման մեկնարկային գին սահմանել 3 267 000,00 ՀՀ դրամ (1 քառակուսի մետրը 653,4 ՀՀ դրամ):

3" Աճուրդում հաղթող ճանաչված մասնակցից համայնքի բյուջե գանձել հողամասի չափագրման և պետական գրանցման ծախսերը:

Հարցը դրվեց քվեարկության:
Քվեարկության արդյունքները - ԿՈՂՄ (10) ԴԵՄ (2) ՁԵՌՆՊԱՀ (8)

7.ԼՍԵՑԻՆ «ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 06-046-0220-0011 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՐՑԸ

(Զեկուցող՝ Գ. Զոբանյան)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով, 67-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 24052022-06-0041 վկայականը՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին որոշում է.

1. Համաձայնություն տալ Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող «Սպիտակ համայնք, գ. Լուսաղբյուր 9-րդ փողոց, թիվ 32 հողամաս» հասցեում գտնվող 06-046-0220-0011 կադաստրային ծածկագրով 0,34629 հեկտար մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասը, գյուղատնտեսական արտադրական շինություն կառուցելու նպատակով, աճուրդով օտարելուն:

2. Հողամասի աճուրդով օտարման մեկնարկային գին սահմանել 2 262 658,86 ՀՀ դրամ (1 քառակուսի մետրը 653,4 ՀՀ դրամ):

3. Աճուրդում հաղթող ճանաչված մասնակցից համայնքի բյուջե գանձել հողամասի չափագրման և պետական գրանցման ծախսերը:

Հարցը դրվեց քվեարկության:
Քվեարկության արդյունքները - ԿՈՂՄ (14) ԴԵՄ (1) ՁԵՌՆՊԱՀ (1)

Ավագանու հերթական նիստի օրակարգի հարցերը սպառվելուց հետո Սպիտակ համայնքի ղեկավար Քաջայր Նիկողոսյանը հայտնեց, որ Սպիտակ համայնքի ավագանու անդամ Կարեն Կուրղնի Հայրապետյանը հրաժարականի մասին դիմում է ներկայացրել, հրապարակեց դիմումը, որից հետո հրապարակեց «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու անդամ Կարեն Կուրղնի Հայրապետյանի՝ ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարած համարելու մասին» արձանագրությունը:

Լսելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ղեկավարի կողմից «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն հրապարակված՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու անդամ Կարեն Կուրղնի Հայրապետյանի հրաժարականի մասին դիմումը՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին ***որոշեց.***

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու անդամ Կարեն Կուրղնի Հայրապետյանի հրաժարականի մասին դիմումը ընդունել ի գիտություն:

Քվեարկության արդյունքները - ԿՈՂՄ (20) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (0)

ՔԱՋԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ՀԱՄԼԵՏ ՄԱՋՄԱՆՅԱՆ

ԼՈՒՍԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԱՐՏԱԿ ՄԱԹՈՍՅԱՆ

ՀԱՅԿ ՍԻՍԱԿՅԱՆ

ԱԼՎԱՐԴ ՀԱՄԲԱՐՅԱՆ

ԳԱԳԻԿ ՅԱՅԼՈՅԱՆ

ՌԱՖԱՅԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՆՈՒՆԵ ԷՀՏԻԲԱՐՅԱՆ

ԿԱՐԻՆԵ ԴԻԼԱՔՅԱՆ

ՎԱՐԴՈՒՀԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՍԱՐԻԲԵԿ ԱՄԻՐՅԱՆ

ՎԱՀԵ ՂԱԶԱՐՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ԳՈՒՐԳԵՆ ՓԻԼՈՅԱՆ

ՄԱՆՈՒՇ ԱԹՅԱՆ

ՍԱՍՈՒՆ ԱՍԱՏՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝ Ա. ՖՐԱՆԳՅԱՆ